Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 31.05.2021թ. թիվ 2112799429 որոշումն անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման թողնելու մասին

<<06>> 07 2021թ. 7-13- 10568 ք.Երևան

Ճանապարհային ոստիկանության պետ, ոստիկանության գնդապետ Ե.Կարապետյանս, վերանայելով Արման Զրվանդյանի ՄԴ/51288-21 դիմումի քննարկման արդյունքում ստեղծված նյութերը՝

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի Գայի պողոտայի 37-րդ շենքի 40-րդ բնակարանի բնակիչ Արման Զրվանդյանը դիմումով խնդրել է բեկանել Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին թիվ 2112799429 որոշումը՝ նշելով, որ այն կայացվել է օրենքի խախտմամբ, քանի որ դրա հիմքում դրված լուսանկարում առկա են օտարալեզու գրառումներ, հստակ չի երևում ավտոմեքենաի հաշվառման համարանիշը և նշված լուսանկարով չի ապացուցվում իրավախախտման տեղը:

Դիմումի քննարկման արդյունքում պարզվել է, որ դիմումատուի փաստարկները չեն կարող վարչական ակտը բեկանելու հիմք հանդիսանալ հետևյալ պատճառաբանությամբ.

<<Տեսանկարահանող և լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին>> օրենքի 3-րդ հադվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթի իրավախախտման հատկանիշների պարզման փուլում իրավախախտումը հիմնավորող ապացույցը իրավախախտումն ամրագրած **տեսանյութն է կամ լուսանկարը,** որը պարունակում է նաև տեխնիկական միջոցով արձանագրված տվյալները: Ըստ նույն հոդվածի 2-րդ մասի՝ որպես իրավախախտումը հիմնավորող ապացույց վարչական կամ դատական կարգով բողոքարկման վարույթում կարող են օգտագործվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 251-րդ հոդվածով նախատեսված ապացույցները:

Հայաստանի Հանրապետությունում տեղադրված բոլոր արագաչափ սարքերը ստուգաչափված են ՀՀ էկոնոմիկայի նախարարության <<Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին>> ՓԲԸ-ի կողմից և դրանց արձանագրած տվյալները համապատասխանում են իրականությանը և տրանսպորտային միջոցների արագության փաստացի արագությանը:

<<Չափումների միասնականության ապահովման մասին>> օրենքի պահանջներով պայմանավորված Հայաստանի Հանրապետությունում շահագործվող բոլոր արագաչափ սարքերը սահմանված ժամկետում և կարգով ստուգաչափված են:

<<Ճանապարհային երթևեկության կանոնները և տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների ու պայմանների ցանկը սահմանելու մասին>> 28.06.2007թ. թիվ 955-Ն որոշման 68-րդ կետի համաձայն՝ բնակավայրերում տրանսպորտային միջոցների երթևեկությունը թույլատրվում է 60կմ/ժ ոչ ավելի արագությամբ:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124.4--րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ երթևեկության սահմանված արագությունը 1-10 կմ/ժ-ով

գերազանցելը, առաջացնում է տուգանքի նշանակում, յուրաքանչյուր գերազանցված կմ/ժ արագության համար՝ նվազագույն աշխատավարձի չափով:

Ըստ արագաչափ սարքի տեխնիկական բնութագրի՝ այն փոխադրամիջոցը, որի արագությունը համարվում է չափված, պետք է առնվազն մասամբ գտնվի նկարի երրորդ քառորդում՝ ընթացքի ուղղությամբ (**գնահատման գոտի): Գնահատման գոտում չպետք է լինի միևնույն ուղղությամբ շարժվող որևէ այլ փոխադրամիջոց՝ նույնիսկ մասամբ: Հակառակ ուղղությամբ շարժվող փոխադրամիջոցները կարող են գտնվել գնահատման գոտում:**

Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին թիվ 2112799429 որոշման անհատական ծածկագրի տակ զետեղված լուսանկարի լրացուցիչ ուսումնասիրության արդյունքում հստակ է դառնում, որ դիմումատուին պատկանող <<MAZDA>> մակնիշի 36PL033 հաշվառման համարանիշի տրանսպորտային միջոցը, Երևան քաղաքի Սարալանջի փողոցում տեղադրված (Գ/Հ՝71293) գործարանային համարով արագաչափ սարքով 06.05.2021թ-ին՝ ժամը 23:14-ին երթևեկելով 80կմ/ժ արագությամբ, հանելով արագաչափ սարքի հնարավոր սխալանքի 10կմ/ժ չափը, գերազանցել է երթևեկության սահմանված արագությունը 10կմ/ժ-ով, ինչի համար պատասխանատվություն է նախատեսված <<Վարչական իրավախախտումների վերաբերյալ>> ՀՀ օրենսգրքի 124.4-րդ հոդվածի 1-ին մասով, ուստի դիմումատուին վարչական պատասխանատվության ենթարկելու մասին թիվ 2112799429 որոշումն իրավաչափ է և օրինական, քանի որ միայն վերջինիս տրանսպորտային միջոցն է գտնվում գնահատման գոտում:

Վիճարկվող որոշման հիմքում դրված լուսանկարն է հիմնավորում իրավախախտման փաստը և ոչ թե դրա վրայի օտարալեզու գրառումները, իսկ արագությունը գերազանցելու փաստը՝ լուսանկարի և սահմանված կարգով ստուգաչափված արագաչափ սարքի տրված տվյալների համադրման արդյունքում: Իրավախախտման փաստի հիմքում դրվել է լուսանկարը, որը վերը նշված հոդվածի իմաստով հանդիսանում է ապացույց, հետևաբար չի կարող գնահատվել որպես օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույց:

Բացի այդ, որևէ իրավական ակտով արգելք չի նախատեսվում իրավախախտման փաստը հիմնավորող ապացույցների վրա օտարալեզու գրառումներ լինելու վերաբերյալ, ավելին՝ արգելք չի սահմանվում որևէ իրավական ակտով, որ այդպիսի գրառումների դեպքում ապացույցը պետք է գնահատվի որպես օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույց, քանի որ այդ գրառումներն ընդհամենը ապացույցի մաս կազմող բաղադրիչներ են, այլ ոչ վարչական վարույթի նյութեր:

Ինչ վերաբերվում է դիմումատուի այն պնդմանը, որ ներկայացված լուսանկարով չի ապացուցվում իրավախախտման տեղն, ապա վարչական տույժ նշանակելու մասին որոշման մեջ իրավախախտման վայրը նշվում է արագաչափ սարքի (տեսախցիկի) տեղադրման վայրով պայմանավորված և ընդգրկում է դրա աշխատայքային տիրույթում գտնվող հատվածը: Վիճարկվող որոշման համար հիմք է հանդիսացել Երևան քաղաքի Սարալանջի փողոցում տեղադրված արագաչափ սարքով արձանագրված, երթևեկության սահմանված արագության գերազանցման փաստը հաստատող լուսանկարը:

Վիճարկվող որոշման անհատական ծածկագրի տակ զետեղված լուսանկարի լրացուցիչ ուսումնասիրությամբ հստակ է դառնում, որ չի կարող կասկածի տակ դրվել իրավախախտումը հենց դիմումատուին պատկանող տրանսպորտային միջոցով կատարված լինելու հանգամանքը:

Դիմումատուին վարչական պատասխանատվության ենթարկելու մասին որոշման հիմքում դրված լուսանկարում նշված է տրանսպորտային միջոցի երթևեկության գոտին,

ուղությունը, ինչը չի կարող կասկածի տակ դնել իրավախախտումը հենց այդ տրոնսպորտային միջոցով կատարելու փաստը:

Այսպիսով հիմնավորվել է, որ դիմումատուին վարչական պատասխանատվության ենթարկելու մասին վերը նշված որոշումն իրավաչափ է և օրինական:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով <<Վարչական իրավախախտումների վերաբերյալ>> ՀՀ օրենսգրքի 293-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 31.05.2021թ. թիվ 2112799429 որոշումը թողնել անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հանձնելու օրվան հաջորդող օրը և կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:
3. Սույն որոշման օրինակն ուղարկել Արման Զրվանդյանին:

Ե.Կարապետյան

Կատարող՝ Հ.Կարապետյան
Հեռ.՝ 011-544-783